

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԻԴՆԵՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սույն թվականի սեպտեմբերի 19-ին Մայր Աթոռ այցելեցին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Սիդնեյի մասնաճյուղի մի խումբ անդամներ:

Նրանք եղան Մայր տաճարում, հիացմունքով ծանոթացան Մայր Աթոռում սրբությամբ պահվող ազգային-եկեղեցական թանգարանային հարստություններին:

Բարեգործականի հարգարժան անդամներին ընդունեց Վեհափառ Հայրապետը: Ընդունելության ժամանակ, հանուն Հ.Բ.Ը. Միության Սիդնեյի մասնաճյուղի, տիկին Սիրվարդ Բեզիկյանը հանդես եկավ Նորին Սրբությանն ուղղված հետևյալ խոսքով.

«Վեհափառ Տեր,

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Սիտնեյի մասնաճյուղի անդամներու խումբով եկած ենք այսօր երկյուղածությամբ խոնարհելու մեր գլուխները Էջմիածնի արքայակերտ ու լուսավորչակերտ տաճարին և Միածնաէջ խորանին առջև, այն սրբազան վայրերուն, ուրկե դարեր առաջ քալեր են մեր արքաները, մեր հրամանատարներն ու հերոսները, մեր առաջին կաթողիկոսը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչն, ու Իր հաջորդները: Մեծն Ներսեսին և Խրիմյան Հայրիկին հաջորդող մեր օրերու շինարար Վազգեն Առաջին Վեհափառ Հայրապետ, եկած ենք Ձեր Ս. Աջը համբուրելով գերագույն երկյուղածությամբ ներշնչվելու և մեր պապերու անմար հավատքեն, Լուսավորչի կանթեղեն սրբազան կայծ մը առնելու մեր պանդուխտի հոգիներուն մեջ, կայծ մը ազգային գիտակցության և ազգային հավատքի, որ հավետ վառ պիտի պահենք մեր հոգիներուն մեջ Ձեր սրբազան օրհնություններուն հետ միասին:

Մեր պատմության դառն ու կսկծալի օրերեն ետք, այսօր գոհություն ենք տալիս Ամենակալին՝ հարություն առած մեր լուսաշող հայրենիքին ու ամոր շինարար Հայրապետին համար:

Եկած ենք այսօր մանավանդ շնորհավորելու Ձերդ Վեհափառության 80-ամյակը: Թող Տեր Աստված երկար ու առողջ կյանք պարգևե Ձեզի, որպեսզի միշտ պայծառ մնա մեզի համար ամենանվիրական Էջմիածնի Մայր Աթոռը:

Եվ թող Մայր Աթոռը օրեօր շեննա, բարգավաճի ու մագնիսի նման մեզ բոլորս հավետ համախմբե իր սրբազան կամարներուն հովանիին ներքև»:

Ընդունելության ավարտին Վեհափառ Հայրապետն իր օրհնությունները բաշխեց բոլորին, միաժամանակ նորանոր հաջողություններ մաղթելով նրանց՝ իրենց ազգօգուտ գործունեության ճանապարհին:

ԹՂԹԱԿԻՑ